Doi: 10.56 737/2953-7843-2026.07-112

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆ
ԵՊՀ
ORCID: 0009-0000-2118-1099

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ. ՄԱՍՆ Բ.[1]

Ժամանակին անդրադառնալու առիթ ունենալով՝ նշել ենք[2], որ Աստվածաշունչ Մատյանը հույժ օգտակար եւ պիտանի հրահանգներ է առաջարկում կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ եւ, ի թիվս այլոց, նաեւ միջանձնային-միջպետական հարաբերությունների, որոնք երբեմն պայմանականորեն, իսկ երբեմն ուղղակի կարելի է եւ պետք է դիտարկել իբրեւ դիվանագիտական ոլորտի համար խորհուրդներ, որ չնայած հազարամյակների հեռավորությանը՝ այսօր եւս կարող են լինել օգտակար եւ պիտանի: Այս օրինակները բազում են եւ տարբեր: Դրանցից այժմ կցանկանայինք անդրադառնալ կաշառքի կամ հակառակ կողմի բարյացակամությունը «գնելու» դեպքերին, որոնք Սուրբ Գրքում երբեմն հնչում են իբրեւ ուղղակի հրահանգ, երբեմն ներկայացվում՝ ի գիտություն առնվելու սկզբունքով:

Նմանատիպ դրվագ է Գ. Թագավորությանց պատումը (Ժե. 18–20), որ ցույց է տալիս, թե ինչպես կարելի է դաշնակից ձեռք բերել եւ հակառակորդին թողնել միայնակ: Գրքի բուն շարադրանքը պատմում է, թե Հուդայի երկրի Ասա թագավորը վերցրեց ողջ արծաթն ու ոսկին, որ մնացել էր Տիրոջ տանն ու արքունական գանձարանում, հանձնեց դրանք իր ծառաներին եւ ուղարկեց Ասորիքի արքային՝ հաղորդելով. «Ահավասիկ քեզ ընծա եմ ուղարկում արծաթ եւ ոսկի, որ բեկանես քո եւ Իսրայելի արքայի միջեւ եղած դաշինքը»: Սուրբ Գիրքը հավելում է, թե ասորվոց արքան անսաց Ասա թագավորին եւ հարվածեց Իսրայելի քաղաքներին: Միջպետական

---

[1]* *Ստացվել է՝ 13.05.2026, գրախոսվել է՝ 19.05.2026: Էլ. հասցե՝* A.Madoyan@hotmail.com:

[2] *Տե՛ս «Էջմիածին», 2025, ժ., էջ 88:*

ջերմ հարաբերություններ հաստատելու եղանակներից բացի՝ հատվածը կարեւոր խորհուրդներ է տալիս ունեցվածքը ճիշտ տնօրինելու վերաբերյալ: Ասա թագավորը միջպետական հարաբերությունները կարգավորելու նպատակով կիրառեց «Տիրոջ տանն ու արքունական գանձարանում» եղած ողջ արծաթն ու ոսկին՝ ցույց տալով պետական բարձր տնտեսվարման ուսանելի ճանապարհ. Տիրոջ տան սպասքը կամ զարդարանքը, գանձարանում կուտակված ոսկին, կարելի է ասել, մեռյալ վիճակում էին կամ քնած էին: Իրենց կենդանության բոլոր օրերին Ասան եւ Իսրայելի թագավորը իրար դեմ պատերազմ էին մղում: Եւ Հուդայի թագավորը կարող էր շարունակել նույն ընթացքը՝ առանց որեւէ քայլ ձեռնարկելու՝ պարզապես վայելելով կյանքը: Սակայն նա նախընտրեց երկրի ողջ ունեցվածքը ներդնել հայրենիքի մշուշոտ ապագան լուսավոր դարձնելու հույսով:

Ոսկին կուտակելու, զարդարանքի վերածելու եւ այն շրջանառության մեջ դնելու տարբերությունն այստեղ վառ ցույց է տալիս Սուրբ Գիրքը, այլ հարց է, որ այն կարդալով՝ բոլորը չէ, որ ընկալում կամ հետեւում են օգտակար խորհուրդներին: Այս կապակցությամբ իբրեւ լավ հակադրություն կարելի է հիշել նորահայտ Ամերիկա աշխարհի գանձերը կողոպտելով Եւրոպա բերողներին: Կային պետություններ-ժողովուրդներ, որ ոսկին եւ արծաթը վեր էին ածում զարդերի եւ հրաշալի ապարանքների, նժույգներ ու կառքեր գնում: Կային եւ այնպիսիները, որ ներկրված յուրաքանչյուր միավոր ներդնում էին տնտեսության մեջ: Այս հետնախորքին միջնադարյան պետությունները ու դրանց առաջնորդներին կարող ենք զուգադրել Հուդայի եւ Իսրայելի վաղնջական օրինակին[3]: Ուշագրավ է նաեւ ասորվոց թագավորի կերպարը. մի կողմից բացահայտ է նրա բարոյական անկումը, երբ ոսկու փայլով շլացած մատնում է վաղեմի դաշնակցին, մյուս կողմից դիտելի է, որ նա չի օգտվում առիթից՝ պարզապես սեփականացնելով Ասայի ուղարկած ամբողջ ոսկին ու արծաթը, չնայած այդ գանձն արդեն իսկ իր մոտ էր՝ իր լիակատար տիրապետության ներքո:

Ազնիվ մետաղներով անազնիվ կամ զարտուղի ճանապարհներ գտնելու մասին է նաեւ Դ. Թագավորացի (14–16)՝ Հուդա-Ասորեստան հերթական հակամարտության պատմությունը, երբ Աքազ արքայի որդի Եզե-

---

[3] *Երեւույթի տնտեսագիտական բաղադրիչի, Իսպանիայի եւ Պորտուգալիայի սնանկացման համար Անգլիայի հարստացման կապակցությամբ տես* Adam Smith, The Wealth of Nations *(*Book IV, Chapter V*):*

կիա թագավորն ապստամբել էր ասորվոց դեմ եւ չէր կամենում ծառայել նրանց արքային։ Բայց երբ Ասորիքի Սենեքերիմը հարձակվեց Հուդայի պարսպապատ քաղաքների վրա եւ գրավեց դրանք, Եզեկիան անմիջապես դեսպաններ ուղարկեց նրա մոտ՝ խոստովանելով. «Մեղանչել եմ։ Հետ դարձիր իմ երկրից։ Եւ ինչ տուգանքի արժանացնես՝ ես կհատուցեմ»։ Եւ Սենեքերիմը երեք հարյուր տաղանդ արծաթ եւ երեսուն տաղանդ ոսկի տուգանք սահմանեց։ Եզեկիան եւս Տիրոջ տանը ու արքայական գանձարանում եղածը հանձնեց, նույնիսկ պոկեց Տիրոջ տաճարի դռներին ագուցված ոսկին, որ ժամանակին ինքն էր ընծայաբերել։ Ամեն դեպքում թերեւս արքայի կեցվածքն արժանի է գովասանքի, որովհետեւ դիվանագիտական հնարավոր միջոցներով ջանացել է իր երկիրն ու ժողովրդին զերծ պահել պատերազմական արհավիրքից ու մղձավանջից անգամ տաճարական զարդարանքը զոհաբերելով ի սեր խաղաղության՝ եւ խուսափելով տարածքային եւ մարդկային կորուստներից։

Բերված դեպքերն ի մտի առնելով՝ ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումները կարող ենք պատկերացնել աստվածաշնչյան պատումի հետեւյալ համապատկերում. այն պետությունները, որ կարողանում են իրենց հարստությունը վերածել լծակի (վարկային միջոց, ներդրումային համակարգ, դիվանագիտական վճար, պատերազմական նորագույն միջոցներ), միշտ հաղթում են նրանց, ովքեր հարստությունը պարզապես պահում են որպես թանկարժեք իր, մետաղի ջարդոն (մեքենա-կառք), անշարժ գույք եւ այլն[4]։

Միջանձնային եւ միջպետական հարաբերությունները կարգավորելու կարեւոր դաս է Առակաց ԺՀ. գլխի 16-րդ տողը, որ բացատրում է, թե՝ «Տուրք մարդոյ ընդարձակեցուցանեն եւ ընդ իշխանս նստուցանեն զնա»,– հուշելով, որ ընծաները մեծացնում են մարդու շրջապատը, հնարավորություն ընձեռում, որ բազմի իշխանների մեջ։ Գուցե ամբողջովին ավելորդ է ասելը, որ այս տեսարանը երբեք չի դադարել, այլ դարեր շարունակ եղել է համաշխարհային ընթացքի եւ առաջխաղացման գլխավոր

---

[4] *Իբրեւ քաղաքական եւ ռազմական հզորության գլխավոր գործոն տնտեսական համակարգի մասին մանրամասն տե՛ս* Niall Ferguson, The Ascent of Money: A Financial History of the World, New York, *2008 (հատկապես Ներածություն եւ գլուխ 1 («Dreams of Avarice»)։ Հեղինակը հիմնավորում է, որ փողը-ոսկին ոչ թե մետաղ է, այլ «արձանագրված վստահություն», եւ տնտեսական նորարարությունն է (վարկային եւ պարտատոմսային շուկաները) հանգեցրել Արեւմուտքի տնտեսական ու քաղաքական գերակայությանը։*

գործոններից մեկը: 18-րդ գլխից քիչ առաջ անցնելով՝ Առակաց ԻԱ. 14-ից իմանում ենք, որ. «Տուրք գաղտնիք՝ դարձուցանեն զբարկութիւն. իսկ որ խնայէ ի տուրս՝ սաստիկ բարկութիւն յարուցանէ», որ աշխարհաբար կհնչի՝ «Գաղտնի պարգեւը մեղմում է բարկությունը, իսկ ով խորշում է պարգեւ տալուց՝ զայրույթ է հարուցում» ձեւով: Անշուշտ այս հատվածների աստվածաբանական մեկնությունները կարող են բարդ եւ խրթին ոճով այլաբան բացատրություններ հրամցնել: Փոխարենը իրավագիտության դիրքերից նայելիս կարող ենք տեսնել, որ խոսքը տարրական կաշառքի մասին է՝ «...գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որեւէ այլ առավելություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը»[5]: Ընդ որում՝ ի տարբերություն Աստվածաշնչի՝ քրեական օրենքը կենտրոնանում է ոչ թե «պարգեւների» «գաղտնի» կամ «բացահայտ» լինելու պարագաների վրա, այլ ըստ դրանց մատուցման նպատակի եւ հիշյալ գործողության մասնակից անձանց հանգամանքի:

*Ամեն դեպքում Աստվածաշունչը վկայում է, թե «նվիրատվությունը» վաղնջական արմատներ ունի, եւ բնական է, որ մարդկությունը փորձել է հնարավոր միջոցներով պայքարել դրա դեմ, սակայն հրնթացս ժամանակների՝ նահանջելու փոխարեն երեւույթն սկսել է նորանոր ասպարեզներ նվաճել: Դրանից չէր կարող զերծ մնալ նաեւ միջազգային հարաբերությունների-դիվանագիտական ոլորտը, չնայած հիշյալ ասպարեզի յուրաքանչյուր հեղինակավոր կառույց փորձել է ըստ կարելվույն պայքարել դրա դեմ: «Ընդդեմ խաթարման եւ խեղման (*corruption*)» ՄԱԿ համաձայնագրերը միտված են պայքարելու «16. Օտարերկրյա պետական եւ միջազգային կազմակերպությունների պաշտոնյաներին կաշառելու» դեմ[6]: Սակայն, սրան հակառակ, ականատեսն ենք մեր հարեւանների բացահայտորեն տարվող «ձկնկիթային քաղաքականության»՝ օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների «սիրաշահման»՝ լավ կազմակերպված եւ համակարգված գործընթացի[7], որի շրջանակներում «...յուրաքանչյուր նստաշրջանի ժամանակ, առնվազն 0,4-ից 0,6 կիլոգրամ խավիար է առաջարկվել*

---

[5] *Հմմտ. ՀՀ քրեական օրենսգիրք՝ հոդված 435, 436 եւ այլն:*

[6] *Ընդունվել է 31 հոկտեմբեր 2003 գլխավոր նստաշրջանում. տե՛ս* https://www.unodc.org/corruption/en/uncac/learn-about-uncac.html:

[7] *Այս կապակցությամբ տե՛ս* «Plush hotels and caviar diplomacy: How Azerbaijan's elite wooed MPs», «The Guardian», *24 նոյեմբեր,* Caviar Diplomacy – How Azerbaijan silenced the Council of Europe:

ԵԽԽՎ-ում Ադրբեջանի տասը կամ տասներկու «առանցքային բարեկամներին» նաեւ քարտուղարության երեք կամ չորս անդամների… Տարեկան երեսուն-քառասուն մարդ է հրավիրվել Ադրբեջան՝ ոմանք համաժողովների, ոմանք ամառային արձակուրդների, եւ նրանց արժեքավոր նվերներ են շնորհվել՝ մետաքսյա գործվածքներ, գորգեր, ոսկյա եւ արծաթյա իրեր, խմիչքներ, ձկնկիթ, դրամ[8]*։ Թերեւս Աստվածաշունչը՝ ի մասնավորի Ծննդոց գրքի ԼԳ. գլուխը կարդալով կարող ենք պատկերացնել, թե հատկապես ինչ մանրամասներով է ուղեկցվել «ձկնկիթի դիվանագիտության» գործընթացը. թերեւս հյուրերը փորձել են դիմակայել գայթակղությանը՝ ասելով, թե՝ «մենք եւս շատ ունենք այս բարիքներից, թող ձերը ձեզ մնա»։ Սակայն հյուրընկալող-համոզողները համառել են, թե՝ Ուրախացե՛ք մեզ հետ եւ ընդունեք մեր ընծաները, որովհետեւ ողորմեց մեզ Աստված, եւ մենք ամեն ինչ ունենք։ Այս վերջիններս ստիպել են, որ հյուրերն ընդունեն ընծաները, իսկ սրանք «ճարահատյալ» համաձայնել են՝ ճիշտ այնպես, ինչպես նկարագրված է Հակոբի եւ Եսավի միջցեղական հարաբերությունների կարգավորումը (հմմտ. Ծննդ. ԼԳ. 10–11)։ Բացի փաստական արձանագրություններից՝ նաեւ Սուրբ Գրոց միջոցով կարող ենք տեղեկանալ, թե ինչ եղավ, երբ եւրոպացի պաշտոնյաները կաշառվեցին. նրանք այլեւս չտեսան Ադրբեջանի ցեղասպան եւ մարդատյաց գործողությունները, այն ամենը, ինչ հակասում էր լուսավոր եւ քաղաքակիրթ 21-րդ դարի մարդասիրական սկզբունքներին։ Նրանք ոչինչ չտեսան, որովհետեւ կաշառքը կուրացրել էր իրենց աչքերը (հմմտ. Ելք ԻԳ. 8 եւ Բ. Օր. ԺԶ. 19)։ Բայց ինչպես կարելի է նկատել, ոչինչ նոր չէ արեւի ներքո (Ժողովող Ա. 9), եւ եւրոպացի պաշտոնատար անձինք ընդամենը Սամուել մարգարեի որդիների ճանապարհն ընտրեցին, որ կորցնելով վերընթաց արահետը՝ տրվեցին ընչաքաղցությանը՝ կաշառք էին վերցնում եւ իրավունքը թյուրում՝ պատճառ դառնալով, որ կառավարման համակարգն ամբողջովին փոխվի (հմմտ. Ա. Թագ. Ը. 3 եւ հջ.)։*

Այստեղ թերեւս կարելի է կարծել, որ մեր բերած սուրբգրական օրինակները կարող էին ամենեւին խորթ եւ անծանոթ լինել խոտելի քայլերի նախաձեռնող ադրբեջանական կողմին, այլ կրոնի հետեւորդ է կամ ներկայանում է իբրեւ այդպիսին։ Այս կապակցությամբ պետք է նկատել, որ

[8] *Տե՛ս* https://www.esiweb.org/publications/caviar-diplomacy-how-azerbaijan-silenced-council-europe; https://assembly.coe.int/Communication/IBAC/IBAC-GIAC-Report-EN.pdf *էջ 2–3 (23–24)։*

եթե նրանք իրապես հավատային ու հետեւեին իրենց մարգարեին, առնվազն պիտի հիշեին երկրորդ սուրահի 188 այաթը, համաձայն որի՝ «Չի՛ կարելի հափշտակել միմյանց գույքը անարդար կերպով եւ այն օգտագործել դատավորներին (այստեղ կարդա՛ միջազգային դիտորդներին) կաշառելու համար, որպեսզի գիտակցաբար եւ անիրավ կերպով տիրանաք մարդկանց ունեցվածքի մի մասին՝ մեղք գործելով գիտակցաբար[9]: Այս այաթով Ղուրանը հստակ արգելում է արդարության վրա ազդելու նպատակով նյութական միջոցի օգտագործումը՝ հիմնովին մերժելով «ձկնկիթային դիվանագիտությունը»: Սրան պետք է հավելել Մուհամեդի խոսքը, որ բացառում է հատվածի ցանկացած տարընթերցում, որովհետեւ ներկայացնում է բացարձակ սահմանում. «Թո՛ղ Աստծու անեծքը լինի կաշառք տվողի եւ կաշառք վերցնողի վրա»[10]: Եւ հարց է առաջանում՝ մի՞թե իրական հավատացյալը կարող էր արհամարհել ներկա հրահանգը:

Արձանագրենք, որ Աստվածաշունչը եւս կաշառքով գայթակղվողների համար ողբալի ապագա է խոստանում. «Կործանման ենթակա է երկիրը, որի առաջնորդները կաշառքով են շարժվում, հոգեւորականները միայն վարձով պատասխանում հարցերին, իսկ մարգարեները լոկ արծաթով գուշակություններ անում» (հմմտ. Միքիա Գ. 11):

Ինչպես տեսնում ենք, պետական եւ միջպետական-դիվանագիտական համակարգում ոսկին եւ արծաթը, այն է՝ դրամական-գույքային բաղադրիչը, կարեւոր, եթե չասենք վճռորոշ դեր է կատարում, իսկ աստվածաշնչյան օրինակները վկայում են, որ այդպես է եղել վաղնջական ժամանակներից սկսած՝ հասնելով մինչեւ մեր օրերը: Առավել ուշագրավ են սուրբգրական այն խրատները, որ հազարամյակներ առաջ ծնունդ առնելով՝ անփոփոխ կիրառվել են ցայս պահը՝ այժմ եւս օգտագործվելով իբրեւ համաշխարհային կառավարման ազդեցիկ միջոց: Աստվածաշունչ կարդում է ողջ քրիստոնյա աշխարհը: Ոմանք հմայվում են աստվածային հրաշքների նկարագրություններով, ուրիշները գրական-գեղարվեստական գոհարներով, որ իրենց մեջ խտացրել են հինարեւելյան ողջ մշակույթը, որ ներկայումս հրամցվում է որպես զուտ հրեական: Բայց կան նաեւ երկրա-

---

[9] *Հմմտ.* https://namaz.today/al-quran/surah-*2*/ayah-*188*:

[10] Իբն Մաջա, *«Սունան», հադիս 2313: Տես նաեւ՝* Ահմադ Իբն Հանբալ, *«Մուսնադ», հադիս 9031.* Ibn Majah, Abu Abdallah Muhammad ibn Yazid. Sunan Ibn Majah. Translated by Muhammad Tufail Ansari. Lahore: Kazi Publications, *1993;* Ibn Hanbal, Ahmad, English Translation of Musnad Imam Ahmad Bin Hanbal. Translated by Nasiruddin al-Khattab. Riyadh: Darussalam, *2012:*

յին կյանքին առավել մոտ կանգնած ազգեր, որ Աստվածաշունչ կարդալով՝ զուտ գործնական դասեր են քաղել ու թերեւս նաեւ դրա շնորհիվ հիմա կարողանում են կառավարել աշխարհը։ Ասվածի լավագույն ապացույց կարող են ծառայել Բ. Օրինաց տեղիները, որ սովորեցնում են. «Շատ ազգերի փոխ կտաս, բայց ինքդ պարտք չես վերցնի՝ բազում ազգերի կտիրես, բայց քեզ չեն տիրի» (ԺԵ. 6)։ Քիչ անց առավել է մանրամասնվում հրահանգը. «Տերը քեզ համար կբացի Իր բարիքների շտեմարանը, որպեսզի ժամանակին անձրեւ տա քո երկրին. կօրհնի քո ձեռնարկած բոլոր գործերը, գումարը փոխ կտաս շատ ազգերի, բայց ինքդ նրանցից փոխ չես առնի։ Եթե լսես քո Տեր Աստծու պատվիրանները, որ պահելու եւ կատարելու համար այսօր քեզ եմ հաղորդում, ապա բազում ազգերի կիշխես, բայց քեզ չեն իշխի։ Քո տեր Աստվածը քեզ կդարձնի գլուխ, ոչ թե պոչ, վերեւում կլինես, ոչ թե ներքեւում» ԻՐ. 12–13։ Այսօր դրամական կախվածությամբ կառավարման այս սկզբունքը համատարած կիրառության անսահմանափակ ասպարեզ է գտել։ «Փոխով» հյուսված անուրը բազում ազգերի է պահում ստրկության մեջ։ Եւ համակարգի ծավալներն ավելի պարզ պատկերացնելու համար կարելի է ընթանալ պարզ դիտարկման ճանապարհով եւ տեսնել, որ վտանգված են այն ազգերը-պետությունները, որ փորձում են կամ խուսափում են արտաքին պարտքի լուծը կրելուց։ Լավագույն օրինակը Ռումինիան է։ Կոմկուսի գլխավոր քարտուղար Չաուշեսկուն, ժողովրդին պահելով ծայրահեղ խնայողության պայմաններում, նպատակադրվել էր պետության արտաքին պարտքը մարել։ Մեծ զրկանքների գնով արտաքին պարտքը մարվեց, սակայն նպատակին հասնելուն պես Ռումինիայում հեղափոխություն եղավ՝ արյունալի զարգացումներով եւ ծանր հանգուցալուծմամբ[11]։ Խառն ու «անհասկանալի» իրավիճակներում Ռումինիան հայտնվեց միջազգային պարտքերի ճիրաններում, երկրի ընդերքն ու հարստությունը հանձնվեց արտաքին կառավարման, եւ ոսկու հանքերի վրա ապրող մարդիկ վերածվեցին իրենց երկրի պարտքե-

[11] *Տես* “Debts Paid, Romania Says Ceausescu Announces Austerity’s Result,” The Washington Post, April *13, 1989;* “Romania Says It Has Paid Off All Its Foreign Debts,” The New York Times, April *13, 1989,* https://www.nytimes.com/*1989/04/13/*business/romania-says-it-has-paid-off-all-its-foreign-debts.html*;* Christoph G. Paulus, “The Concept of State Insolvency,” Jahrbuch für Recht und Ethik / Annual Review of Law and Ethics *11 (2003): 335;* John Perkins, Confessions of an Economic Hit Man *(*San Francisco*:* Berrett-Koehler Publishers, *2004), 142:*

րը վճարել չկարողացող ստրուկների[12]: Միջազգային պարտքերից դրամական լծակներից փորձեցին խուսանավել Լիբիան եւ Իրաքը, որոնց հարուստ հանածոները նվազագույնը կայուն ապագա էին խոստանում, ինչն անընդունելի էր բոլորին փոխ տալու գաղափարի ջատագովների համար: Թե ինչ լուծումներ եղան տվյալ երկրների համար, հայտնի է ամենեցուն: Երկու երկրները փորձեցին դուրս գալ քարյուղին խարսխված դոլարային համակարգից. 2000 թվականին Սադամ Հուսեյնը հայտարարեց նավթային վաճառքի դոլարը եւրոյով փոխարինելու մասին, իսկ Մուամար Քադաֆին նախաձեռնել էր համաաֆրիկյան «Ոսկե դինարի» նախագիծը՝ հիմնվելով Լիբիայի՝ ավելի քան 140 տոննա ոսկու պաշարներին եւ նպատակ ունենալով ապահովել երկրի տնտեսադրամային անկախությունը արտաքին պարտքից: Այս երկրների հարուստ ընդերքն ու կայուն տնտեսական վիճակը խոստանում էին ինքնաբավություն, սակայն համաշխարհային կառավարման սկզբունքների տեսանկյունից նման շրջադարձերն անընդունելի էին, ինչն էլ հանգեցրեց հայտնի աշխարհաքաղաքական լուծումների[13]:

Այսօր գրեթե համընդհանուր ընդունելություն ունի այն փաստը, թե արտաքին պարտքը մի յուրօրինակ զսպաշապիկ է, որ ի ցույց է դրվում ընդվզողների համար՝ իբրեւ խոնարհության կոչ եւ հորդոր[14]:

Վերեւում մենք անդրադարձանք ասորվոց թագավորի բարոյական դրսեւորումներին, ուշադրություն հրավիրելով այն հանգամանքին, որ չնայած հնարավորությանը, չէր օգտվել դիմացինի կախյալ վիճակից՝ պար-

---

[12] Ռումինիայի արտաքին պարտքի ամբողջական մարման եւ դրան հաջորդած քաղաքական ցնցումների վերաբերյալ տե՛ս Vladimir Tismaneanu, Stalinism for All Seasons: A Political History of Romanian Communism, University of California Press, *2003, էջ 210–225: Համմտ. նաեւ* Joseph Stiglitz, Globalization and Its Discontents, *2002, որտեղ հեղինակը վերլուծում է միջազգային դրամատու կառույցների ազդեցության լծակները զարգացող պետությունների ինքնիշխանության վրա:*

[13] Տե՛ս United Nations Office of the Iraq Programme, "Basic Figures," United Nations, *2003,* https://www.un.org/depts/oip/background/basicfigures.html; United Nations Office of the Iraq Programme, "Background Note and Answers to Recent Questions," United Nations, April *25, 2003;* F. William Engdahl, A Century of War: Anglo-American Oil Politics and the New World Order (London: Pluto Press, *2012), 265;* David Graeber, Debt: The First *5,000* Years (Brooklyn: Melville House, *2011), 382;* Timothy Mitchell, Carbon Democracy: Political Power in the Age of Oil (London: Verso, *2011), 154:*

[14] Տե՛ս Joseph E. Stiglitz, Globalization and Its Discontents (New York: W. W. Norton & Company, *2002), 40–54;* David Graeber, Debt: The First *5,000* Years (Brooklyn, NY: Melville House, *2011), 3–18:*

զապես սեփականացնելով Ասայի ուղարկած ամբողջ ոսկին ու արծաթը: Անկախ ամեն ինչից՝ զուտ բարոյական սկզբունքներով է բացատրելի այս երեւույթը, թե եղել են նաեւ ուրիշ բաղադրիչներ, որոնք «զսպել են ասորի թագավորի ախորժակը», դժվար է ասել: Սուրբ Գիրքը չի մանրամասնում, թե փոխադարձ վստահության եւ դիվանագիտական շփումների ինչ մակարդակ է եղել նախաքրիստոնեական շրջանում, սակայն վկայում է, որ մի երկրի թագավորը կարող էր աներկյուղ իր տերության ողջ ոսկին եւ արծաթը ուղարկել ավելի զորեղ պետական կառույցի առաջնորդին՝ վստահ լինելով, որ ուղարկված հարստությունը ստորությամբ չի յուրացվի: Ու թերեւս կարելի է ենթադրել, որ հին առաջնորդներն ավելի ազնիվ նկարագիր են ունեցել[15]*:*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Աստվածաշունչ, դիվանագիտություն, միջպետական հարաբերություններ, կաշառք, տնտեսություն, ոսկի եւ արծաթ, «ձկնկիթային դիվանագիտություն», արտաքին պարտք, համաշխարհային կառավարում, բարոյականություն:

РЕЗЮМЕ

В статье рассматриваются библейские повествования и наставления в контексте современных международных отношений, дипломатических практик и политической экономии. На основе анализа Третьей и Четвертой книг Царств, Книги Притчей Соломоновых и Второзакония автор показывает, что ветхозаветные тексты содержат представления о принципах государственного управления, использовании материальных ресурсов во внешнеполитической деятельности и роли финансовых обязательств в межгосударственных отношениях. Особое внимание уделяется сопоставлению библейских примеров дарообмена, подкупа и политического влияния с современными формами международной коррупции, включая феномен так называемой «икорной дипломатии».

---

[15] *Համմա. Նիկոլա Սարկոզիի մասին լուրերը.* https://www.aljazeera.com/news/*2025/9/25/*french-ex-president-sarkozy-guilty-of-conspiracy-in-libya-campaign-case:

Сравнительный анализ дополнен обращением к отдельным положениям Корана, а также к ряду исторических примеров XX–XXI веков (Румыния, Ливия, Ирак), позволяющих проследить преемственность механизмов политического и экономического воздействия в международной среде. В результате исследования делается вывод, что библейские тексты представляют интерес не только как религиозные и литературно-исторические памятники, но и как важный источник для осмысления закономерностей власти, дипломатии и геополитических процессов в прошлом и настоящем.

SUMMARY

This article examines biblical narratives and teachings in the context of contemporary international relations, diplomatic practices, and political economy. Based on an analysis of the Books of 1 Kings and 2 Kings, the Book of Proverbs, and Deuteronomy, the author demonstrates that Old Testament texts contain concepts regarding the principles of state governance, the use of material resources in foreign policy, and the role of financial obligations in interstate relations. Particular attention is paid to comparing biblical examples of gift-giving, bribery, and political influence with modern forms of international corruption, including the phenomenon of so-called "caviar diplomacy."

The comparative analysis is supplemented by a review of specific passages from the Quran, as well as a number of historical examples from the 20th and 21st centuries (Romania, Libya, Iraq), which allow us to trace the continuity of mechanisms of political and economic influence in the international arena. The study concludes that biblical texts are of interest not only as religious and literary-historical monuments, but also as an important source for understanding the patterns of power, diplomacy, and geopolitical processes in the past and present.